ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 25 ԱՄՅԱԿԸ

28.01.2017 13:03

Շնորհավորում եմ Հայոց Բանակի մարտիկներին: Ապրիլյան իրադարձություններն ապացուցեցին, որ մեր 18-20 տարեկան զինվորների և նրանց սպաների մարտունակությունն ու ոգին շատ բարձր է:

Փաստացի պատերազմի վտանգի տակ իրենց ծառայությունն իրականացնող սպաներն ու զինվորները բազմիցս են ապացուցել, որ հենց կյանքի գինն է երկրի խաղաղությունը: Ինքնազոհության պատրաստ մեր զինվորները կասեցրեցին թշնամու դավադիր նախաձեռնությունը:

Միայն Հայոց Բանակի հզորությունը կարող է ստիպել այլ պետություններին հաշվի առնել մեր երկրի շահերը: Հետևաբար, այլ պետությունների դաշնակցությունն ակնկալելուց առաջ, պետք է հզորացնենք մեր բանակը՝ սոցիալական պայմաններ ստեղծելով զինվորների և նրանց ընտանիքի անդամների համար, օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ պատասխանատվության ենթարկելով բանակում չարաշահումներ իրականացնող սուբյեկտներին, իսկ որպեսզի բանակն իր թիկունքի համար չմտահոգվի և ետ չնայի, պետք է յուրաքանչյուրս մեր ոլորտում քրտնաջան և լավ աշխատելով կառուցենք մեր երկիրը:

Խաղաղություն մեր հայրենիքին:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })